ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գագարին

(հասցե՝ գ. Գագարին, Երիտասարդական 10)

17.10.2025թ.

Սույն թվականի հոկտեմբերի 17-ին ժամը 12:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Արմստրոյ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի Պիոներների փողոց թիվ 1 հասցեում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գագարինի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության և գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների /1-ին հանրային քննարկում/ նիստը:

Ներկա էին Գեղարքունիքի մարզպետարանի, Սևանի համայնքապետարանի, «Արմստրոյ» ՍՊ և «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչները, Գագարին բնակավայրի վարչական ղեկավարը և համայնքի բնակիչները /մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը/:

Բացման խոսքով հանդես եկավ Սևան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանը: Նա ողջունեց մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց ներկա գտնվելու համար, ներկայացրեց հանրային քննարկման առարկան և խոսքը փոխանցեց Ծրագրի ձեռնարկող ընկերությունների ներկայացուցիչներին:

Ելույթով հանդես եկավ «Քոնսեկոարդ» ՍՊԸ ներկայացուցիչ Արման Խաչատրյանը: Նա ներկայցրեց հանրային քննարկման մասնակիցներին, նշեց, որ ներկայացվող գործունեության պատվիարտու է հանդիսանում ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեն և հակիրճ նկարագրեց քննարկման առարկան: Նա մանրամասն ներկայացրեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գհանատման և փորձաքննության մասին»» ՀՀ օերնքով սահմանված պահանջները և ընթացակարգերը, նշեց, որ մինչ շինարարական աշխատանքները անհրաժեշտ է լինելու ստանալ բոլոր համապատասխան եզրակացությունները և ասաց, որ ներկայացված գործընթացների ամբողջ ընթացքում բնակիչները ազատ են դիմել թե՛ Ձեռնարկող ընկերություններին, և թե՛ համապատասխան պետական մարմիններին, եթե կունենան հարցեր/դիտողություններ/առաջարկություններ ներկայացվող գործունեության վերաբերյալ: Այնուհետև Ա. Խաչատրյանը նշեց, որ ներկայացվող գործունեությունը բնապահանական տեսանկյունից ցածր ռիսկային է և կառավարելի, իսկ ամբողջ համապատասխան տեղեկատվությունը և մեղմացնող միջոցառումները ներկայացված կլինեն համապատասխան ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաթեթում, որոնք հասանելի կլինեն համայնքի ներկայացուցիչների համար:

Այնուհետև ելույթի խոսքով հադնես եկավ «Արմստրոյ» ՍՊԸ ներկայացուցիչ Էդուարդ Մարտիրոսյանը: Նա մանրամասն նկարագրեց նաախտեսվող գործունեությունը, տեխնիկա-տնտեսական հիմնավորումները և նախագծային լուծումները:

Ս. Համբարձումյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք նախագծում նախատեսված է ֆուտբոլային մարզադաշտ և եթե այդպիսին կա, խնդրեց ներկայացնել նախատեսվող տեխնիկական ցուցանիշները:

Է. Մարտիրոսյանը նշեց, որ այդ հարցը հստակեցման փուլում է և հստակ կներկայացված վերջնական նախագծում:

Ս. Համբարձումյանը նշեց, որ նախատեսվող ֆուտբոլային մարզադաշտը պետք է լինի 60 x 40 չափերով կամ ավելի մեծ, քանի որ բնակավայրում արդեն իսկ կա ավելի փոքր մարզադաշտ և ևս մեկի կառուցումը ըստ առկա պահանջարկի նպատակահարմար չէ:

Է. Մարտիրոսյանը նշեց, որ նշված առաջարկությունը համայնքը կարող է ներառել տրամադրվող ՃՏԱ-ում, ինչը միանշանակ հաշվի կառնվի պատվիրատուի կողմից:

Ելույթով հանդես եկան Գագարին բնակավայրի բնակիչները, նշելով, որ ներկայացվող ծրագրի վերաբերյալ իրենք ունեն որոշ դիտարկումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, մասնավորապես.

1. Նախատեսվող Գագարինի միջնակարգ դպրոցի առկա շենքի քանդումը չի դիտարկվում որպես կենսունակ տարբերակ, քանի որ այն հանդիսանում է ինչպես բնակավայրի համար մեծ կարևորություն ունեցող օբյեկտ, այնպես էլ պատմամշակութային ժառանգություն (նշվածի վերաբերյալ բնակիչները ներկայացրեցին վերջին տարիների իրենց բնակավայրում տեղի ունեցած բացասական օրինակներ): Որպես այլընտրանք իրենց կողմից առաջարկվեց դիտարկել նոր դպրոցի շինարարությունը նույն տարածքի այլ (չկառուցապատված) տարածքում, ինչը իրենց կողմից գնահատվում է որպես ավելի նպատակահարմար: Բացի այդ, նշվեց առկա դպրոցի շենքը որպես քոլեջ/ուսումնարան օգտագործելու հնարավորությունը, եթե նոր կառուցվող դպրոցը կկարողանա ապահովել ավելի մեծ քանակությամբ աշակերտների համար համապատասխան պայմաններ:
2. Նախատեսվող ֆուտբոլային մարզադաշտը առաջարկվում է նախագծել հանարվորինս մեծ տարածքով, ինչը թույլ կտա ապահովել սպորտի (մասնավորապես՝ ֆուտբոլի) հանդեպ աճող հետաքրքրվածության պահանջարկը և սպորտի զարգացվածության ապահովումը ոչ միայն Գագարին բնակավայրի, այլև ամբողջ համայնքի համար:
3. Դպրոցի առկա շենքի անհամապատասխանությունը տեխնիկական նորմերին և անվտանգության խնդիրներների առկայությունը բնակիչների կողմից գնահատվեց որպես ոչ հիմնավորված: Նրանք նշեցին, որ նույն պայմաններում է գտնվում բնակավայրի շենք/շինությունների մեծամասնությունը, իսկ դպրոցի առկա շենքի պահպանման պարագայում բնակավայրը պատրաստ է իր աջակցությունը տրամադրել շենքի հնարավոր վերականգնման/ուժեղացման հետ կապված հարցերում:

Ներկաները կարևորեցին այն հանգամանքը, որ բնակիչները ակտիվ մասնակցություն ունեն բնակավայրի զարգացման հետ կապված հարցերում և

պատրաստ են աջակցել ցանկացած գործունեության, ինչը կխթանի բնակավայրի/համայնքի զարգացմանը: Միևնույն ժամանակ նրանք կարևորեցին այն հանգամանքը, որ պատմամշակութային արժեքների պահպանումը նույնպես հանդիսանում է նշված զարգացման անփոխարինելի մաս:

Վերոնշյալի հետ կապված Ձեռնարող ընկերությունների ներկայացուցիչները ներկայացրեցին համապատասխան պարզաբանումներ և նշեցին, որ հնչեցված դիտարկումները և առաջարկությունները կարձանագրվեն և հնարավորինս հաշվի կառնվեն:

Բացի վերոնշյալից, քննարկում ծավալվեց նաև նախատեսվող աշակերտների քանակի վերաբերյալ: Համայնքի ներկայացուցիչների կողմից նշվեց, որ գործունեությամբ նաախտեսված աշակերտների քանակը ավելի քիչ է, քան դպրոցում աշակերտ կա տվյալ պահին:

Է. Մարտիրոսյանը նշեց, որ կարձանագրի այդ հարցը և հավելեց, որ դա անհրաժեշտ է պարզաբանել ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին Ս. Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների

Պատասխանատու և վարող Ս. Համբարձումյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ Է. Մարտիրոսյան